ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/40

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Մասնակից՝ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Գևորգյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցում, ընպելու ջրի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1000-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 22.01.2020թ. թիվ 8.1-37 գրության հիման վրա, 29.01.2020թ. «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/40 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 19.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2020թ.-ին:

2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 22.01.2020թ. թիվ 8.1-37 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Հայտնում ենք Ձեզ, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար «Ըմպելու ջրի» ձեռքբերման համար հայտարարված «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով

գնման ընթացակարգի շրջանակներում ԱՁ Արտուշ Խաչատրյանը գնահատող հանձնաժողովի 17.12.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ ճանաչվել է ընտրված մասնակից: «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետի (պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 19.12.2019թ.-ին) ավարտից հետո 26.12.2019թ.-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ԱՁ Արտուշ Խաչատրյանի էլեկտրոնային փոստին է ուղարկել կնքվելիք պայմանագրի նախագիծը: Ըմպելու ջուր ՄՀ համար շնորհումը համակարգի միջոցով ԱՁ Արտուշ Խաչատրյանի կողմից ընդունվել է 26.12.2019թ.-ին, սակայն ԱՁ Արտուշ Խաչատրյանը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումը կից գրությամբ չի ներկայացրել պատվիրատուին: Համաձայն հրավերի 9.5 կետի. «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից», գնահատող հանձնաժողովը 21.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ որոշել է զրկել ԱՁ Արտուշ Խաչատրյանին պայմանագիր ստորագրելու իրավունքից:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.02.2020թ. գրությամբ դիմել է «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.01.2020թ.-ի

թիվ 26/26-1/1000-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ընպելու ջրի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ -ին:

19.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Հանձնաժողովի 21.01.2020թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանչված «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի նախագիծը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Հրավերի 9.5 կետը, «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին զրկել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1000-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ընպելի ջրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ -ին:

19.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Հանձնաժողովի 21.01.2020թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/20» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանչված «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի նախագիծը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Հրավերի 9.5 կետը, «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին զրկել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, զրկվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1000-2020 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/40 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**